

**ՀԱՅԿ. ՍՍՌ-ՈՒՄ ՄՈՆՈՄԵՐՆԵՐԻ ԵՎ ՊՈԼԻՄԵՐՆԵՐԻ ԱՐԴԵՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻՆ ԵՎԻՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

1958 թ. հոկտեմբերի 28-ից մինչև 30-ը Նրեմանում տեղի ունեցավ խորհրդակցություն, որը հրավիրել էին Հայկ. ՍՍՌ-Գիտությունների ակադեմիան և ԺՏԽ-ն: Խորհրդակցությունը նվիրված էր ռեսպուբլիկայում մոնոմերների ու բարձր մոլեկուլյար միացությունների արդյունաբերությանը և այդ ասպարեզում գիտա-հետազոտական կազմակերպությունների ունեցած խնդիրներին:

Խորհրդակցության աշխատանքին մասնակցեցին ռեսպուբլիկայի գիտական հիմնարկների և արդյունաբերության ներկայացուցիչները, ՍՍՌ-Գիտությունների ակադեմիայի ներկայացուցիչները, ՍՍՌ-Պետպլանի, ՍՍՌ-Մինիստրների Սովետին կից Քիմիայի Պետական կոմիտեի և մասնագիտացված ճյուղային ինստիտուտների, բուհերի, ժողտնտխորհների և երկրի արդյունաբերական ձեռնարկությունների ներկայացուցիչները:

Խորհրդակցությունում ղեկուցումներով հանդես եկան ակադեմիկոս Ի. Կոունյանցը, ՍՍՌ-Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ռ. Յերգլինյան (ՍՍՌ-ԳԱ-ի էլեմենտա-օրգանական միացությունների ինստիտուտ), դոկտոր-պրոֆեսոր Ա. Կլեբանսկին, քիմիական գիտությունների դոկտոր Յու. Գորինը (Սինթետիկ կաուչուկի համամիութենական գիտա-հետազոտական ինստիտուտ), տեխնիկական գիտությունների թեկնածուներ Կ. Ուլադիշևը, Ն. Գենկինյան (Ազոտային արդյունաբերության Պետական ինստիտուտ) և ուրիշներ:

Խորհրդակցությունում լավեց ավելի քան 20 ղեկուցում՝ մոնոմերների և բարձր մոլեկուլյար միացությունների արդյունաբերության զարգացման հեռանկարների, ակտուալ պրոբլեմների գծով առանձին լաբորատորիաների աշխատանքների արդյունքների և սինթետիկ նյութերի արտադրության բնագավառում գիտության ընդհանուր խնդիրների մասին:

Ձեկուցումների քննարկման և կարծիքների փոխանակության շնորհիվ խորհրդակցությունը նշեց, որ Սովետական իշխանության տարիներին Հայաստանում ստեղծվել և զործում է քիմիական

բազմաճյուղային արդյունաբերություն, որի մեջ ներկայացված են օրգանական սինթեզը, անօրգանական քիմիան, էլեկտրաքիմիան և էլեկտրաթերմիան:

Ներկայումս ռեսպուբլիկայում օրգանական սինթեզը բազավորվում է կալցիումի կարբիդից ստացվող ացետիլենի վրա, որը արտադրության մեթոդով և տեխնիկա-տնտեսական ցուցանիշներով զիջում է ներկայումս արդյունաբերության մեջ գոյություն ունեցող պրոպենիլ տեղություններին:

Կարված է ներգետնի բալանսը և հումքային բազայի բացակայությունը ռեսպուբլիկայում դանդաղեցրել են քիմիական արդյունաբերության հետագա զարգացումը:

Քիմիական արդյունաբերության զարգացման մասին ՍՄԿՊ Կենտկոմի ընդունած վիթխարի ծրագիրը, ինչպես նաև ռեսպուբլիկային Ղարադաղի հանքավայրի արհեստական գազ մատակարարելու մասին որոշումը և բարձրորակ կերակրի աղի անսպառ հանքերի հայտնաբերումը լայն հնարավորություններ են ստեղծում ռեսպուբլիկայի քիմիական արդյունաբերության հետագա զարգացման համար:

Քիմիական արդյունաբերության զարգացման յոթնամյա պլանով նախատեսվում է արդյունաբերական մասշտաբով բնական գազից ացետիլենի ստացումը, որը հնարավորություն կտա վերացնելու կարբիդի արտադրությունը Նրեմանում և զգալիորեն մեծացնելու ացետիլենի արտադրանքը: Այդ դեպքում կմեծանա գոյություն ունեցող արտադրությունների կարողությունը. սինթետիկ կաուչուկին՝ 2 անգամ, վինիլացետատին՝ 5,5 անգամ, քացախաթթվին՝ 5 անգամ: Միաժամանակ կկազմակերպվի պոլիբլորովինիլային խեփի, վինիլբեքսի և ացետիլցելյուլոզի, իսկ նրա հիման վրա ացետատային մետաքսի արտադրությունը:

Ախտայում նախատեսվում է կազմակերպել կապտոնային կորդի արտադրություն՝ դոդերի արդյունաբերության պահանջները սինթետիկ կորդով առկա հովելու համար:

կիրովականի քիմիական կոմբինատում ըստեղծվում է մեկամինի և սինթետիկ կորունդի արտադրություն, ինչպես նաև նախատեսվում է ամոնիակի արտադրությունը փոխադրել բնական գազի վրա, որը հնարավորություն կստեղծի մեծացնելու նրա արտադրությունը ավելի քան 2 անգամ: Ռեսպուբլիկայի քիմիական արդյունաբերության զարգացման համար նշված միջոցառումները կարող են հաջողությամբ իրականացվել միայն օրգանական սինթեզի ասպարեզում գիտա-հետազոտական աշխատանքների զգալի արագացման պայմանով:

Խորհրդակցությունն ընդունեց հետևյալ հանձնարարականները՝

1. Մոնոմերների և բարձր մոլեկուլյար միացությունների արդյունաբերության զարգացման բնագավառում:

1959—1965 թթ. ընթացքում արագացնել քիմիական արդյունաբերության զարգացման համար ընդունված այն ուղղությունների կենսագործումը, որոնք նախատեսում են:

Բնական գազից ացետիլենի արտադրության կազմակերպումը ջերմօքսիդիչ պիրոլիզի եղանակով, հետագայում վերացնելով նրա արտադրությունը՝ կալցիումի կարբիդից:

Սինթետիկ կաուչուկի թողարկման կրկնապատկումը, վինիլացետատի բազայի վրա բարձր մոլեկուլյար միացությունների թողարկման խիստ ավելացումի և պոլիվինիլբյուրիդի, քացախաթթվի, ացետիլցելյուլոզի և այլ նոր արտադրությունների ստեղծումը:

Ամոնիակի արտադրության զգալի ընդլայնում բնական գազի հիման վրա:

Արագացնել պոլիվինիլ սպիրտի բազայի վրա էլեկտրամեկտաիչ թաղանթների և թելքերի արտադրության, ինչպես նաև սինթեզ-գազի քիմիական վերամշակման հեռանկարների հարցերի մշակումը:

Խորհրդակցությունը նպատակահարմար համարեց ուսումնասիրել ամոնիակի և բնական գազի կոմպլեքսային գործածությունը՝ բարձր մոլեկուլյար միացությունների և սինթետիկ թելքերի արտադրության կազմակերպելու նպատակով:

Նկատի ունենալով կերակրի աղի վերամշակման հետագա մեծացման անհրաժեշտությունը, խորհրդակցությունը նախատեսել է ֆոտոսինթե-

զի միջոցով կապրոնակտամի արտադրության և դրան զուգընթաց նիտրոզիլբյուրիդի, ոչ էլեկտրական թղորի և մյուս պրոդեկտների արտադրության կազմակերպման հարցի ուսումնասիրությունը:

2. Գիտա-հետազոտական կազմակերպությունների խնդիրների բնագավառում:

Նկատի ունենալով, որ ռեսպուբլիկայի բարձր մոլեկուլյար և նրանց սկզբնական նյութերի արդյունաբերության զարգացման համար հումքային բազա հանդիսանում են բնական գազն ու կերակրի աղը, ապա ռեսպուբլիկայի գիտա-հետազոտական կազմակերպությունների պրոբլեմատիկայի մեջ պետք է մտնի այդ սկզբնական նյութերը պատրաստի արտադրանքի փոխարկելու հիմնական պրոցեսների ուսումնասիրությունը:

1959—1965 թթ. ընթացքում գիտա-հետազոտական աշխատանքի առարկա պետք է հանդիսանան հետևյալ պրոբլեմները՝

բնական գազից ացետիլենի ստացման պրոցեսների կատարելագործումը:

ացետիլենի քիմիան:

սինթեզ-գազի օգտագործման ուղիները:

ածխաջրածինների թլորացումը:

կերակրի աղի օգտագործման ուղիները:

Սինթետիկ նյութերի արտադրության նախատեսվող զարգացումը պահանջում է առարկաներ արտադրելու համար նյութերի վերամշակման հարցերի մանրակրկիտ նախապատրաստումը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է էապես ընդլայնել աշխատանքները բարձր մոլեկուլյար միացությունների վերամշակման տեխնոլոգիայի ուսումնասիրության գծով և արդյունաբերությունը նախապատրաստել պոլիմերային միացությունները արտադրության մեջ լայնորեն օգտագործելու համար:

Այս նպատակով պետք է ստեղծվեն նոր, մասնագիտացված լաբորատորիաներ և փորձնական արտադրություններ:

Անհրաժեշտ է նաև էապես ընդլայնել քիմիական տեխնոլոգիայի պրոցեսների ու ապարատների թեորիայի և պրակտիկայի բնագավառում տարվող աշխատանքները:

Պետք է մշակվեն նոր տիպի բարձր արտադրողական ապարատուրայի, խողորացված ագրեզատների նոր տիպեր: Մեծ ուշադրություն պետք է դարձնել պարբերական պրոցեսների փոխարեն

անընդհատ պրոցեսներ ստեղծելու վրա: Անհրա-
ժեշտ է նույնպես ամեն կերպ խորախուսել ու
աջակցել գործարանային լաբորատորիաների նա-
խաձեռնությունը և բարձրացնել նրանց դերը գո-
յություն ունեցող տեխնոլոգիական պրոցեսների
կատարելագործման, ինչպես նաև արտադրության
նոր եղանակների յուրացման և արմատավորման
գործում:

Խորհրդակցությունը հանձնարարեց նույնպես
ուսումնասիրել ռեսպուբլիկայի օրգանական սին-
թեզի արդյունաբերության հումքային բազայի հե-
ռանկարային ընդլայնման հարցը՝ հումքի ռե-
սուրսների մեջ, բացի բնական գազից, հեղուկ
նավթային ածխաջրածիններ լրացուցիչ կերպով
ներգրավելու միջոցով:

Ռեսպուբլիկայում օրգանական սինթեզի ար-
դյունաբերության զարգացման խնդիրների հաջող
լուծումն ապահովելու համար, անհրաժեշտ կազ-
մակերպչական միջոցառումների բնագավառում,
խորհրդակցությունը հանձնարարել է՝

1. Արագացնել Հայկ. ՍՍՌ ԺՏԽ Քիմիական
արդյունաբերության վարչության նոր գիտա-հե-
տազոտական և նախագծային ինստիտուտի կոմպ-
լեկտավորումն ու սարքավորումը:

2. Արագացնել Հայկ. ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի Օրգանական քիմիայի ինստիտու-
տում պոլիմերների և մոնոմերների սինթեզի գծով
նոր բաժնի կազմակերպումը և ընդլայնել ինստի-
տուտի մյուս լաբորատորիաները:

3. Արագացնել ВНИИСК-ի (Սինթետիկ
կաուչուկի համամիութենական գիտա-հետազոտա-
կան ինստիտուտի) ֆիլիալի կազմակերպումը,

այն կոմպլեկտավորել կադրերով և ապահովել
լաբորատորիաների ու փորձնական տեղակայում-
ների պատշաճ սարքավորումը:

4. Ռեսպուբլիկայի բուհերի համապատասխան
ամբիոնները լայնորեն ներգրավել քիմիական ար-
դյունաբերության զարգացման ակտուալ պրոբ-
լեմների ուսումնասիրության մեջ:

5. Ուժեղացնել ռեսպուբլիկայի գիտա-հետա-
զոտական հիմնարկների կապը կենտրոնական,
գիտական և նախագծային կազմակերպություն-
ների հետ:

Խորհրդակցությունը նշեց, որ ռեսպուբլիկա-
յում (բուհերում, համալսարանում, տեխնիկում-
ներում և անմիջականորեն արտադրության մեջ)
աճեցվել և դաստիարակվել են քիմիկոսների,
բանվորների, վարպետների, տեխնիկների, ինժե-
ներների և գիտնականների որակյալ կադրեր,
որոնք պրակտիկայում ցույց են տվել իրենց
հմտությունը՝ ժամանակակից քիմիական արդյու-
նաբերության բարդ արտադրական պրոցեսների
ստեղծման և զարգացման գործում:

Խորհրդակցությունը վստահություն հայտնեց,
որ Հայաստանի քիմիական արդյունաբերության
ձեռնարկությունների գիտնականները, գիտական,
ինժեներա-տեխնիկական աշխատողները և բան-
վորները գործի կղնեն իրենց բոլոր ջանքերը
ՍՄԿ Կենտկոմի Մայիսյան պլենումի տրոշում-
ների կենսագործման համար և ուժեղ վերելք
կստեղծեն ռեսպուբլիկայի քիմիական արդյունա-
բերության զարգացման, հատկապես, սինթետիկ
նյութերի և նրանցից պատրաստվող առարկաների
արտադրության գործում:

ԾԱԿՈՏԿԵՆ ԼՑԱՆՅՈՒԹԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1958 թ. հոկտեմբերի 22-ից մինչև 25-ը Երև.
վան քաղաքում կայացավ Դ. Ի. Մենդելևի ան-
վան համամիութենական քիմիական ընկերության,
Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետի Պետական
գիտա-տեխնիկական կոմիտեի և Հայկ. ՍՍՌ Շի-
նարարության մինիստրության Շինարարական
նյութերի և կառուցվածքների գիտա-հետազոտա-
կան ինստիտուտի կողմից կազմակերպված Հա-

մամիութենական խորհրդակցություն, որը նվիրված
էր շերմամեկուսացման համար և իբրև լցանյութ
բետոնի ու երկաթբետոնի համար օգտագործվող
ուռած միներալային և արհեստական նյութերի
արտադրության ընդլայնման:

Խորհրդակցության աշխատանքին մասնակցե-
ցին մոտ 500 հոգի, այդ թվում՝ 12 պրոֆեսոր և
63 գիտության թեկնածու, ՍՍՌՄ Մինիստրների